ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2025 թվականի N 150-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 710-Լ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 898-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին բնակավայրերի ցանկերը հաստատելու մասին» N 710-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 1 հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Շահառու միավորի կազմը որոշվում է ընտանիքի բոլոր անդամների համատեղ դիմում-հայտարարության հիման վրա, ընդ որում՝ դիմումատուի, նրա ամուսնու (գրանցված ամուսնության դեպքում) և բոլոր անչափահաս երեխաների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի N 898-Լ որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տվյալների

առկայությունը դիմում-հայտարարության մեջ պարտադիր է: Եթե դիմում-հայտարարության մեջ որպես ընտանիքի անդամ ներառված է այլ չափահաս անձ, ապա նրա ամուսնու (գրանցված ամուսնության դեպքում) և բոլոր անչափահաս երեխաների տվյալների առկայությունը դիմում-հայտարարության մեջ ևս պարտադիր է: Պարտադիր լինելու պայմանը չի տարածվում ընտանիքի այն անդամների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կամ Օպերատիվ շտաբի կողմից չեն հաշվառվել որպես բռնի տեղահանված կամ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու, քանի որ նրանք չեն հանդիսանում ծրագրի շահառու:».

2) N 1 հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետում «12» թիվը փոխարինել «9» թվով.

3) N 1 հավելվածի 10-րդ կետի 4-րդ ենթակետը «բոլոր» բառից հետո լրացնել «չափահաս» բառով.

4) N 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետը «2 մլն դրամ» բառերից հետո լրացնել «, իսկ եթե հիփոթեքային վարկը տրամադրվել է 2024 թվականի մայիսի 16-ից հետո, ապա 3 մլն դրամ» բառերով.

5) N 1 հավելվածի 12-րդ կետից հանել «՝ առնվազն 400 քմ մակերեսով» բառերը և «3 մլն» բառերը փոխարինել «4 մլն» բառերով.

6) N 1 հավելվածը 13-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին կետով՝

«13.1. Եթե սույն հավելվածի 6-րդ կետում նշված երեխան ծնվել է բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի ստացումից կամ իրացումից հետո, ապա այդ երեխայի հաշվով աջակցությունը կարող է ուղղվել սույն հավելվածի 18-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հավելյալ հիփոթեքային վարկի մնացորդային մայր գումարի մարմանը,

իսկ դրա բացակայության դեպքում՝ իրացվել սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված դրական մնացորդի իրացման ուղղություններով։».

7) N 1 հավելվածի 18-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) այն ընտանիքները, որոնց անդամներից առնվազն մեկը՝

ա. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող (շահառու հանդիսացող) անձ է,

բ. զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի կամ ընտանիքի համար օրենսդրությամբ սահմանված պարգևավճար ստանալու իրավունք ունեցող (ունեցած) անձ է,

գ. կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող (ունեցած) անձ է,

դ. ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ճանաչված) անձ է կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր կամ միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող երեխա է (ճանաչված է հաշմանդամություն ունեցող երեխա).».

8) N 1 հավելվածի 18-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) ցանկացած այլ կազմով ընտանիքները, որոնք ի լրումն ծրագրով նախատեսված հավաստագրի՝ անշարժ գույքի արժեքի առնվազն 30 տոկոսի չափով լրացուցիչ վճար կկատարեն կամ հավելյալ հիփոթեքային վարկ կստանան ծրագրի ցանկացած բաղադրիչով.».

9) N 1 հավելվածի 18-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող հիփոթեքային վարկ ունեցող ընտանիքները։».

10) N 1 հավելվածի 19-րդ կետում «2026 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2025 թվականի հուլիսի» բառերով.

11) N 1 հավելվածի 20-րդ կետում «2027 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2026 թվականի հուլիսի» բառերով.

12) N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» N 898-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 3-րդ կետի 3-րդ ենթակետում «2024» թիվը փոխարինել «2025» թվով, իսկ «նոյեմբերի» բառը՝ «ապրիլի» բառով.

2) հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը «ե» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ» և «է» պարբերություններով՝

«զ. Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակները,

է. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թվականների ծրագրի շահառուների տվյալները՝ որոշման N 1 հավելվածի 16-րդ կետով սահմանված բացառության ստուգման համար.».

3) հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությունը «շտեմարանում» բառից հետո լրացնել «կամ Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում,» բառերով.

4) հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետը «զ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» պարբերությամբ՝

«է. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թվականների ծրագրի շահառու է.».

5) հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետում «2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված ծրագրի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշումներով հաստատված ծրագրերի» բառերով.

6) հավելվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետը «հավաստագիրն» բառից առաջ լրացնել «որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետով սահմանված» բառերով.

7) հավելվածի 3-րդ կետի 11-րդ ենթակետից հանել «և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու փաստը» բառերը.

8) հավելվածի 3-րդ կետի 13-րդ ենթակետը «հավաստագիր» բառից հետո լրացնել «կամ բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի կամ անհատական բնակելի տան կառուցման՝ իրացված հավաստագրում ավելացվում են 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված երեխայի տվյալները» բառերով.

9) հավելվածի 3-րդ կետի 13-րդ ենթակետի «ը» պարբերությունը «հիփոթեքային վարկի» բառերից հետո լրացնել «(հավաստագրի իրացումից հետո հավաստագրում ավելացված երեխայի հաշվով աջակցությունը ստանալու դեպքում՝ շահառուին տրամադրված հավելյալ հիփոթեքային վարկի)» բառերով.

10) ուժը կորցրած ճանաչել հավելվածի 3-րդ կետի 13-րդ ենթակետի «թ» պարբերությունը.

11) հավելվածի 3-րդ կետի 14-րդ ենթակետը «(այդ թվում՝ տարածքային կենտրոններ)» բառերից հետո լրացնել «: Եթե հիփոթեքային վարկ տրամադրած կազմակերպությունը ծառայության հետ կնքել է համագործակցության պայմանագիր, ապա

անհրաժեշտ տեղեկանքը համապատասխան ծրագրային գործիքի միջոցով տրամադրում է ծառայությանը և շահառուն ծառայություն չի դիմում» նախադասությամբ.

12) հավելվածի 3-րդ կետի 15-րդ ենթակետը «2 մլն դրամ» բառերից հետո լրացնել «, իսկ եթե հիփոթեքային վարկը տրամադրվել է 2024 թվականի մայիսի 16-ից հետո, ապա 3 մլն դրամ» բառերով և «մարմանը» բառից հետո լրացնել «: Իսկ եթե շահառուն դիմել է հավաստագրի իրացումից հետո հավաստագրում ավելացված երեխայի հաշվով աջակցության գումարը ստանալու համար, ապա այն փոխանցվում է տեղեկանքում նշված բանկային հաշվի համարին, որն ուղղվում է ծրագրի շրջանակում շահառուին տրամադրված հավելյալ հիփոթեքային վարկի մարմանը» բառերով.

13) ուժը կորցրած ճանաչել հավելվածի 3-րդ կետի 16-րդ ենթակետի «բ» պարբերությունը.

14) հավելվածի 3-րդ կետի 17-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17) սույն հավելվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված հավաստագիրը համապատասխան ծրագրային ապահովության միջոցով ենթակա է փոփոխման հավաստագրում ներառված ընտանիքի որևէ անդամի մահվան վկայականի կամ հավաստագիրը ստանալուց հետո՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված երեխայի ծննդյան վկայականի հիման վրա: Այս դեպքում ծառայությունը մահվան կամ ծննդյան վկայականը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հավաստագրից հեռացնում է ընտանիքի մահացած անդամի տվյալները կամ ավելացնում է նոր ծնված երեխայի տվյալները և շահառուի կողմից նշված էլեկտրոնային հասցեին ուղարկում փոփոխված հավաստագիրը.».

15) հավելվածը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ կետերով՝

«8. Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի մահվան դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, եթե շահառուի ժառանգը չի հանդիսանում ընտանիքի անդամ, ընդ որում՝ այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը, իսկ եթե շահառուն չունի ժառանգ, ապա նրա մահվան դեպքում աջակցության գումարի վճարումը կազմակերպությանը շարունակվում է մինչև վարկի ամբողջական մարումը:

9. 2024 թվականի մայիսի 16-ից հետո գործող հիփոթեքային վարկի մարման աջակցության դեպքում պետական աջակցության գումարը շահառուի կողմից ենթակա է վերադարձման պետությանը՝ փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով, եթե բնակարանը կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքը կամ անհատական բնակելի տունն օտարվում է աջակցությունը ստանալուց հետո 5 տարվա ընթացքում, ինչպես նաև ի հայտ են գալիս որոշման N 1 հավելվածի 14-րդ կետով սահմանված հանգամանքները։»։

3. Սահմանել, որ սույն որոշման գործողությունը տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 5-7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-15-րդ ենթակետերի, որոնց գործողությունը տարածվում է 2024 թվականի հունիսի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ